


ՏՆՕՐԵՆ-ՆԱԲԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՆՓԻԱՐ

Նամակ կամ որ եւ է գրութիւն
պէտք է ուղղել առ

ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼՐԱԳՐ
Պազար Մուրուր, ԳԱԶԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿՐ ԼՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔԵՍԱԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եզրագրութիւն ստիւն. ուղ զհ. 80
» » վեցամսէ ալ » 50
Օս.ար երկիրներ տարկանք 25
» » մի ամսու » 10
Թղթատարութիւն » 10
Բեան վրայ » 10

Խմբագրութեան ուղղութեամբ
մ.սկ կամ ալ գրութիւն ետ չի տրուիր:

ՈՐԲԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Իմաստուն բարեգործութիւնը՝ անիմաստ ազգասիրութեանէն զերազանցապէս բարձր է ու կրնայ դարձանել չարիքը կարեւորութեան սահմանին մէջ: Լալագին հառաչներ արձա- կելու, զիրար հակասելու, զիրար չի հասկնալու տեղ, ժողովներ լնդլնդներն ու դարձանք խոր- հինք աղէտին որ արկնում ու սուգով պատեց Հայաստանի մեր եղբայրները, մեր քոյրերը: Ցանկեալ հազարներով կը հաշուին այրինքն ու որբերը որոնք իրենց ամուսինէն, իրենց ծնող- քէն զրկուած, գեռ երկիւղը սրտերին կը մնան անաղաղական, ներկային մէջ անստոյգ ու ապագային համար՝ յուսահատ, — Ի՞նչ երբէք ապագայ մը խորհելու սիրտ ունին խեղճներ:

Որբերուն նուիրուելիք նպատակը ու պաշա- պանութիւնը չի նմանիր ընտել հիւանդանոցի մը կամ աղքատախնամ մարմնի մը հասցումը օգնութեան որ ծերունիներ ու անկարներ մի- այն սփոփէ: Ամբողջ սերունդ մըն է որ պիտի փրկուի կորուստէ, հայրենի առողջ հողին վրայ ծլած թարմ ուժեր, որոնք քիչ մը եւս՝ ու կը խամբին, կը տկարանան:

Եւ մտածեցէք որ այս փրկարար մեծ գործը՝ մեծ զոհողութիւններու չի կարօտիր. կը բաւէ որ ամեն հայ անհատ, աշխարհի ո՛ր կողմն ալ հաստատուած ըլլայ, իր կարողու- թեան չափով նիւթական նպատակ մը հասցունէ:

Եթէ անկեղծապէս փափագինք ու դրա- կան, արագ կերպով իրականացունենք մեր փափագը, առանց չափ սիրտ ու շունչ հառ- ցունելու, առաքինութիւններու մեծագոյնը գործած պիտի ըլլանք, ազգային առաքինու- թիւն մը ու բարեգործութիւններու ամենէն արդիւնաւորը: Եզրագրութիւն հայերն, իրենց կարգին, զգացն այս փափագը, այս պաշ- տականութիւնը, ինչպէս երբեք անտարբեր չին մնայած սր և է աղէտի առջեւ որ իրենց հեռարնակ եղբայրներուն պատահած ըլլայ: Ոչ որ պիտի ուզէ առարկել թէ քսակներն յոգնած են՝ զաղթականներուն համար կա- տարուած հանդանակութեան. բարի մար- դուն ձեռքը չի յոգնիր ու քսակը չի պար- պուր, երբ մանաւանդ իր ազգին որբերուն համար պիտի կարկառուի:

Այս հաւատքով՝ երկար հրաւերներու պէտք չենք տեսնիր: Խնամատար յանձնաժող

դովն արդէն իսկ ձեռնարկած է գործի ու ե- ռանդով՝ կ'աշխատի կարեւոր արդիւնք մը ձեռք բերելու, մի և նոյն ատեն խորհրդակ- ցելով ու բանակցելով գոյանալիք գումարին նպատակայարմար գործածութեանը վրայ: Եւ այս կէտը ոչ նուազ էական է քան առաջինը. օտար հաստատութիւններու խնամքին յանձ- նուած հայ տղաքներէն դանդաճներ, տըր- տուններ լսուեցան՝ թէ ազգային-կրօնական դատարարականութիւնը ոչ միայն կը զլացուի ի- լինաց, այլ և տեղ տեղ խտրու կարգիւնի հա- յերէն ազօթելու անգամ: Յանձնաժողովը շըր- ջահեաց ըլլալ կուզէ այս ամենուն համար: Այդ հոգը իրեն թողունք. բայց մենք գոնէ դիւրացնենք նիւթականը: Ամեն դատակարգ իր նպատակ բաժինը ու տեղը պիտի ունենայ հանգանակութեան տեսլին մէջ, մնայուն կամ միանուազ: Եւ հինգ ֆրանք նուիրողն ալ հինգ հարիւր ֆրանք կամ աւելի նուիրու- ղին հաւատար սրտի թեթեւացում մը, պարտ- քը կատարողի մը զօհունականութիւնը պիտի կրնայ զգալ:

ԱՅԺՄԵՈՒԹԻՒՆ

«ՁԵՅԹՈՒՆ» — Միասնական ստուար հասո- ռը, հեղինակ Աղասի, քաղաքականութիւն Արշակ Զօպանեանի, փարսեան մը, ակարներով, ու Վիկոր Պեռարի պարճախօս մէկ յառաջա- քանովը ձոխսցած:

Երուպական վերջին Սուրհանդակը քե- րաւ մեզի այս գործը որուն անունը միայն քաղական է սիրտերին քունդ հասկնալու. ք- պագրուած է Բարիք, Մեքիսը քր Ֆրանս գրական ընկերութեան քարտէսը: Երկու մասի կը բաժնուի. առաջինը՝ Ձեռքունի պատմութիւնը, ևսակական ժամանակներէ սկսած, ամենի ու ճշգրիտ, պաշտելի յի- շտակներով ու աւանդութիւններով յեցուն. երկրորդը՝ 1895ի ապստամբութիւնը, կեն- դանի կերպով պատկերացած, իր քարտ- քեանը մէջ՝ արագացել էր իր արագմիտի կը- կարագրութիւններուն մէջ ոգեւորիլ:

Ճշմարիտ դիցազներգութիւն մըն է այս պատմութիւնը, իրական ու ժամանակակից դիցազներգութիւն մը, ուր հայրենասիրու- թիւն ու անձնագոհողութիւն կը պատկերա- նան հինգ հազար կտրիւ հայերու մահառու- մին ու ձախսանաւորին մէջ վարսուն հա- զար հոգիները թշնամի քանակի մը դէմ:

Մեր նախահայրերու փառաբանութիւնները, մեր ազգային պատմութեան մէջ ակարագ- րուած մարտիրոսութիւններն են կարծես որ կը նորոգուին այս եղերուն մէջ, հին հա- ռասին է որ ի յայտ կուգայ նոր ուժերով՝ գեղջուկ տերտերին ու ամօքեւած կոյսին, փայտի երիտասարդին ու դողող ծերունիին իմ, ամենին ալ նոյն զգացումով վառուած, կեանքի, պատուի ու հայրենի տան պաշտ- պանութիւն:

Պ. Աղասի, գրիկ երիտասարդ հեղինակ- կը. որ այդ շարժման պարագայներէն ու վարիչներէն մէկը եղած է, արդէն իսկ ծա- նօթ իր անունով ու գործունէութեամբ, այս հասոյթով մեծ ծառայութիւն մը կը մատու- ցանէ ազգային դասին, մասնաւորապէս եւ- րոպական աշխարհին ծանօթացնելով Ձեռ- քունի վերջին ապստամբութեան ծագումը ու պարագաները: Իր մրանագէտ աշխա- ակիցը, որ ստանձնած է քաղաքականութեան հոգը, զնախահայր օժանդակ մը եղած է ի- րեն:

Հազիւ ժամանակ ունեցած հասոյթին եղերը քղաքաշտ, փութացիկ մեր ընկեր- ցողներուն ծանօթացնել այս պատմական գործին երեւումը որուն վրայ յառաջիկային խօսիլ՝ հաճելի պատմականութիւն մը պիտի տեսնենք մեզի:

ԳՐԶԻ ՔՍԱՆԱՃՈՅԷ

ԴԱՄԱՆԱՆ ԱՐ ՕՍԻՐԻՍ

Պիտեր, 30 Յունիս 1897

Կեանքին ինչ ըլլողը և կամ որո՞ւն անուշ ըլ- լողը հոս կը հասկնամ կոր, Օսիրիս:

Մեզը այն երեսունը հինգ տարեկներուն զորս Շուկային, կամուրջին և Գառնիկի մէջտեղ եր- թեւեկելով անցուցած եմ:

Մարդ երբ Պալիս կապրի, ստիպուած է կեան- քին կէտը անցընել Շուկային կամ Մախուսէին հա- մար աշխատելով, մէկ քառորդը ֆէյէտնի անակիզքն ու անվախձան խմորագրականները կարգադրել և մը նայեալ քառորդը՝ միմեկի քննադատել... Ինչու կը ժպտա կոր, Օսիրիս, հաւատա՞ որ բառախաղութիւն մը ընել մտքիս չէր անցներ այս պահուստ:

Եւ վերջապէս ինչ էր մեր կեանքը, չափուած, զձուած հորիզոն մը, միօրինակ կերպով ժայռին զարնող ալիքներ, տաքանքինգ օրը անգամ մը լու- սինը, զոր հազիւ փարագայրիկ ետեւէն կը նշմարես, բօրեաղի և լոստի ապուշ յաշտութիւն մը, Ռօ- պերթ Քօլթի անխտապիւր պարգեւատրութիւնը, Մասիսի գետնաւաւիւրի պէս չափիկ փոխելը, Ման- զուսի մէջտեղի միջոցէն Եփեսոսին, Գառնիկի ա- նուշադայ քաղաքները, կամուրջին՝ օրը տասը

անգամ բացուիլը և Սրամայուլի քսան անգամ գոյ-
ուիլը, Բոնիբորտիայի լիակած շանթէօգները, Հաճի
Պէթլիլին լոխուսը, Գատըղիւղի 4 թիւ շոգենաւը,
Գարակէօգեան կտակը և Օրթաղեղի բամբակաւորը,
Մայրապետին քոնսէրները և Թօթաթիւնի ճաշերը,
Էտկար Վինաւորի անվերջանալի երթալ գալը,
Քօնսօլիտին ելեւէջը և գործերու անշարժութիւնը:

Ատկէ ուրիշ ինչ կայ Պօլիս, ըսէ՛:
Հոս կեանքը քաղցր է, պայծառ և ջինջ, սիր-
ուած կնկան մը ժպիտին պէս:

Հոս, սիրելիս, մարդը Պօլսոյ կամ Եգիպտոսի
երկրտանի այն մերենան չէ որ կուտէ, կը քալէ, կը
պառկի և գործին կերթայ:

Եւրոպական գիւղացեացութիւնը կեանքի մեծ
զարոյցն է որ մէկտեղեալ գոյութեամբ առեւելք կը բաց-
ուի. ես գոնէ այսպէս կը մտնեմ:

Ես՝ քառասունի մօտ Թամսէս մը, քիչ շատ կա-
րողութեան և կնկան մը տէր, (երկուքն ալ միեւնոյն
ատեն ունենալու է) տնային փորձառութեան պաշտօն
մը՝ կրիլ՝ սկսող ուսերուս վրայ, գիտակցի աշխարհիս
ընթացքին, ամենագէտ Չարմարճըրարի վաճառա-
կաններու դասին պէս, քիչ շատ կարգապահ, խմատուն,
գործունէս, հաւատարմ ես զիս այնքան սղօտիկ,
այնքան ոչինչ, այնքան տգէտ կը գտնեմ այս
Եւրոպայիներուն քով որքան աննշան կզգայ ինքզին-
քը կեդրոնական վարժարանի նորեկ աշակերտ մը
Մոսկովեանի անձնաւորութեան ստջեւ:

Ամեն բան նոր է ինձ համար, զգացումներս
ալ, տեսածս ալ իմացածս ալ:

Այս եզերքներուն բնութիւնը անգամ տարբեր
է: Զգլխիչ չգիտեմ ինչ մը կայ արեւին ճառագայթ-
ներուն, ալիքներուն բախումին, նուազեցող զը-
նայքին, կիներու լուգանքին և էրիկարդոյ խօսուած-
քին մէջ:

Առտու կանուխ երբ Վերոնիկին հետ լեռը կե-
լենք՝ արեւին ծաղիլը տեսնելու համար, կզմայլիմք
լեռներու ալրորութեան, կանանչին գեղեցկութեան
և ծովին լիակազաղ հանդարտութեան վրայ: Թու-
լութիւն կուգայ վրայ, հեշտանք մը, կուզես սիրել,
երգել և աղբիլ:

Մէկ կողմէ գեփիւնը, միւս կողմէ վազվազ
թռչունները, սաղին արեւին գգող ճառագայթները,
հոն ոչխարներու մայելը և այս ամենը մօտաւոր՝
կենսատու, զրաւիչ, կը գինովցնէ գրեզ ինչպէս
կը գինովցնէ խարտեաչ աղջկան մը քօնսէին բուրբուր:

Հինգշաբթի 1 Յուլիս 1897

Երէկ իրիկուն նամակս կիսատ թողուցի՝ այսօր
շարունակելու նպատակաւ. բայց, աւտո՛ղ, եթէ
զիտնաս տրամադրութիւններս որքան փոխուած են
այս անցած տասներկու ժամերուն մէջ:

Աւտո՛ղ, մի կարգար, պատու՛ երէկի նամակս
երէկի գրողը այս օրուան մարդը չէ: Տեսնելու,
զգալու, մտածելու եղանակներս բոլորովին փոխ-
ուած են:

Բառ մը և ահա՛ ամեն բան կը տապալի, ամեն
բան գէշ կը տեսնեմ, երջանկութիւնը խոյս կուտայ
ինձէ, սեւ հոգեր, գորշ մտածումներ, թանձր մեղա-
մագձութիւն մը զիս կը շրջապատեն:

Ո՛ր են երէկի աշխուժութիւնս, մտքի պայծա-
ռութիւնս. գրելու, բացատրելու, հասկցնելու տրա-
մադրութիւններս:

Երէկ գիշեր ժամը 9ին Վերոնիկին հետ ծովե-
զերք գացինք:

Լուսինը իր կըր այտերուն տակէն կը ժպտէր
մեր երեսին, լուսնին մը, ամիսփութ մը կար
մեր չորս գին, հեռուէն միայն նուագախումբի մը
հեշտօրօր շեշտերը մեզ կը հասնէին. ծովը իր լայն
անկողինն մէջ չէր շարժեր: Բնութեան ամեն մէկ
տարրէն բանաստեղծութիւն մը զուրս կուգար:

Մենք երկուքս ձեռք ձեռքի մէջ և այդ այ-
տի վրայ, չէինք խօսիլ անգամ, այդ խորհրդաւոր
լուսնիւնը չի խանգարելու համար:

Սակայն անցեալիս յիշատակներովը կզրազէր
միտքս. աշխիւ առջեւ կուգային զարոյցէն շրջանա-
ւարտ ելլելս, առաջին սէքս, առաջին սիրային նա-
մակս, առաջին վատասակս և ամուսնութիւնս, հորս
նիքիս իրիկունը, վերջապէս այն ամեն պղտիկ մի-
ջաղէպները որ կեանքին զարդերն են ու համեմունքը:

— Մի՛տքդ է, հարցուցի յանկարծ, մեր առաջի
տեսակցութիւնը:

— Ինչպէ՞ս չէ, հոգիս, Մօտոս Պուռնուն չէ՞ր:
— Մեր ամուսնութիւնը:

— 1890 հօկտեմբեր 17ին:
— Որքան աղւոր էիր այն գիշեր, գիտես:
— Եւ դու ո՛րքան ազնիւ:
— Վերոնիկիւնիւնիդ է՞ն աղւոր օրը ո՛րք եղած է:
— Կեանքիս էն աղւոր օրը... էն աղւոր օրը,
գիտես՞ որն է, առ՝ Ղալաթիայի մադագան վրաս
գարծուցիլ ես...

Ռ.Ս.ՄՍԷՍ

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Ի Գ. ՊՈԼԻՍ — Ռուսական դեսպանին
մեկնման լուրը արձագանգ կը գտնէ Տեյի
Թեյէկրաւի մէջ: Պ. Նէլիտօֆի Հռոմի ռուսա-
կան դեսպան պիտի անուանուի եղբր և իրեն
պիտի յաջորդէ Ի Գ. Պօլիս՝ Սթոքհոլմի դես-
պան Պ. Զինովիչ:

— Սրանհարցի թղթակիցը զրոյց մը կը
յիշէ թէ Լուհէմ փաշա հրաժարական տուեր
է, պատրուակելով որ հաշտութեան համար
առաջարկուած պայմաններուն առջեւ կարգա-
պահութիւնը չի կրնար պահել բանակին մէջ:

— Վիէնայի Բօլիքիչէ Բօրեսթօնսեմին
տեղեկութեանց նայելով, վերջին պատերազ-
մին մէջ թուրքերէն 900 հոգի սպաննուեր և
2400 հոգի վիրաւորուեր են ի Թեսալիա, 91
հոգի սպաննուեր և 664 հոգի վիրաւորուեր
են Եպիրոս. ընդամենը 994 մեռեալ և 3064
վիրաւորեալ: Մեռեալներուն մէջ կան 2 փա-
շա, 27 սպայակոյտի սպայ և 45 բարձրագոյն
սպայ:

— Շարժումս հասած անգլիական թեւ-
թերը թուրքերու ձերբակալման լուրեր կը
հրատարակեն. Բանկալթիի զինուորական վար-
ժարանէն ինն ռուսացի և ուրիշ հարկերի չափ
խաւով երիտասարդներ բանտարկուեր են ե-
ղբր:

— Պօլսոյ նաւահանգստին մէջ նաւային
ծանր արկած մը պատահեր է չորեքշաբթի
օրը: Գերմանական Պիթրիչ շոգենաւը զար-
նուեր է Ռայնայի շոգենաւին, նոյնպէս գեր-
մանական, որ 2000 թօնօ սարսղութեամբ
սպրանք բեռցած էր: Ռայնայիսէ հինգ վայր-
կերի մէջ ընկղմեր է, ռուսական և իտալական
պահակաճաւերուն մէջտեղ: Տանընչորս նա-
ւաստի ունէր որոնց ամենքն ալ խղղուեցան.
մինակ նաւապետն ազատուեցաւ, թէեւ մին-
չեւ վերջին վայրկեանը կամփակին վրայ կե-
ցած էր: Հըն պահակաճաւէն օգնութեան
գաղաղ մակոյկ մը շրջելով, երկու նաւաստի
ալ անկից խղղուեցան:

Աթէնք. — Նախարարապետ Պ. Ռալլի նե-
րում ինքզինքն ռուսական նաւուն հրամանա-
տարէն, Բիրէի մէջ պատահած կռուին հա-
մար:

— Տէրութիւնը խորհուրդ տուին Յունաս-
տանի՝ արձակել իր պահեստի զինուորները,
ապահովելով զայն թէ թշնամիութիւնը չեն
կրնար վերակսիլ:

— Ռուսիա շրջաբերական մը ուղղեց տե-
րութիւններուն, պարզելով այն ձեռնարկները
զորս հարկ է ընել Թուրքիոյ մօտ, հաշտու-
թեան կնքումը փութայնելու համար: Այս
շրջաբերական լաւ տպաւորութիւն առաջ բե-
րաւ Աթէնքի մէջ և անոր ուղարկումը ա-
ռաջին քայլ մը կը նկատուի զոր կառնեն Տե-
րութիւններն՝ իրենց խօսքը քաջեցնելու համար:

— Աթէնքէն կը հեռագրեն Թայպլին թէ
Կրէտէի ապստամբներէն Տափօթիս որ երբեմն
հեղին բանակին կը ծառայէր, պատերազմա-
կան աստեղի մը առջեւ դատուեր է: Ամբաս-
տանուած էր թէ 1894 յունիսին, բանտա-
պահ եղած ատենը, չորս բանտարկեալ փա-
խուցած էր՝ որոնց երեքը մահուան դատա-
պարտուած, և ինքն ալ խոյս տուած անոնց
հետ: Այդ թուականին ի բացակայութեան
դատապարտուած էր քսան տարուան բան-
տարկութեան:

Ամբաստանեալը չորացաւ իր յանցանքը,
բայց իր փաստաբանը առաջ բերաւ սա պա-
րագան թէ Տափօթիս մեծ քաջութիւն ցոյց
տուած էր կրէտական վերջին ապստամբու-
թեան միջոցին: Այս տեսութեամբ, պատե-
րազմական ատենը անպարտ հռչակեց Տա-
փօթիսը, ունկնդիր ժողովրդեան խանդավառ
ծափահարութիւններուն մէջտեղ:

ՀԱՆՐԻ ՄԷԵԼԱՔ

Փրանսական գրականութիւնը մեծ կու-
րուս մը քրաւ Թրու-Թրուի հեղինակին մահ-
ումը գոր հեռագիր ծանուց նախընթաց օր:

Հակի Մեէալի հարիւրի մօտ քստերա-
կան հեղինակութիւններ ունի որով մեծ
յաջողութիւն գտած են նոյն իսկ Փրանսայէն
դուրս:

Մեէալի Բարիզ ծնած է 1832ին և իր
առաջին գործը ներկայացուած է 1855ին,
Բաշէ-Ռուստայ քաւորնին մէջ:

Իր գլխաւոր գործերն են՝ Պէլ Էլէն,
Պարզ Պէօ, Լա վի Բարիզէն, Լա կրանտ
Տիւշէս, Լէ Պրիկան, գորս գրած է Լիստովի
Հաշիվի և Օմենկաի աշխատակցու-
թեամբ:

Լը Պրէզիլէն, Փանի Լիւր, Թրու-Թրու,
Թրիքօլ է Բաքօլէ, Թօթօ չէ Թաթա, Լա
Բրիթի Մարքիզ, Լա Պուլ, Լա Սիկալ, Տե-
քօլէ, Մա Բուլին իր ամենեւն շատ խաղաց-
ուած կտորներն են:

Փրանսական Ակադեմիայի անդամ, իր
ձկուն և նորամիտ գրութիւններով մեծ տեղ
մը գրաւած էր քաւերագրերու աշխատիկն
մէջ:

Իր խաղերէն շատերը հոս ևս Պոլիս ալ
շատ մը ներկայացումներ ունեցած են:

Ռիսան որ «Վրան քաց» քաներ գրել
կը սիրէր, ասկայն իր գործերուն մէջ այն-
քան նոր քաւորական մը և քաւերագր
այնքան ճշգրիտ նկարագրութիւն մը կը դնէր
որ նոյն իսկ ամենեւն խաւարաւոր հայր
իր աղջիկը քաւորն կրնար տեսնիլ երբ Մեյ-
լափի մէկ գործը կը ներկայացուեր:

Ակադեմիոյ անդամ ընտրուած ասէնք
Ժիւլ Սիմօն կարդացած է ընդունելութեան
ճառը, որուն մէջ կըսէր.

«Ձեր գրութիւններն մեջ, Պարոն, առ՝
աղեկութիւնը կայ որ Փանթեզիս երեսնեց
է, միևնոյն քաւորականը հիմն է անոնց:
Կիներէն շատ կախորժիկ, կը սիրէ գանձոյ՝
քայց ոչ պաշտելու ասիական. իրենց պա-
կաստութիւններուն սպ կը գոցէի, քայց ասոր
համար կոյր չէի ըլլար: Կարծեմ տեղ մը
քաւած էի «Աստուած կիներ ասեղծելով էրիկ

մարդոց քիմիկ խնդրայ ուզած է՝ վեց հազար տարիներէ ի վեր կիւնք միեւնոյն տոսք կը կրկնէ մեզի եւ մեկն դարձեալ կը խաբարինք. սա մեզ կըսէ — «Պաշտէ՛ զիս, Աստուած պիտի ըլլաս — Ի՛նչ կը պաշտենք զինքը, սակայն միշտ տխուր մը ըլլալէ անդին անցած չունինք»:

Նորամիտ հեղինակին մահուանը «Անմահ» մըն ալ կը պակսի Բառաստեմեռութիւն եւ արժող մը դասարկ կը մնայ Ռիշրիեյի սան մէջ:

Զօրային աչքը լո՛ւս:

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Բաղադրական ժողովն ինքն ալ իր ամառնային արձակուրդը պիտի ունենայ, երկու շաբաթ մէկ անգամ դումարութեամբ յետ այսորիկ, մինչեւ հսկանքներ սկիզբը:

Առաջնորդական Տեղապահ Տ. Յակոբ Ծ. Վ. Աշոտ որ յառաջիկայ երկուշաբթի Աղեքսանդրիա կերթայ օգտաւորութեան համար, ամեն անգամ պիտի գայ կիսամեայ նիստերուն նախագահելու: Իր բացակայութեան միջոցին, իրեն պիտի փոխանորդէ Տ. Մամբրէ քահանան՝ Առաջնորդարանի ընթացիկ գործերը ղեկավարելու մէջ:

Հանդէս Ամսօրեայ, Վիեննայի Միսիթարեան Հարց ամսաթերթը, իր յուլիսի թիւին մէջ ողջունելով Փարոսին երեւումը ու յաջողութիւն մաղթելով մեր լրագրական համեստ ձեռնարկին, մասնաւորապէս կը շեշտէ սա պարագան թէ «Եգիպտոսի ազգայնոց վրայ ցարդ մեր գիտցածը կամփոփուէր առ առաւելն քանի մը թղթակցութեանց մէջ, որ պատահամբ կերեւէին ազգային լրագրաց մէջ» և գոհունակութիւն կը յայտնէ որ Փարոս կանոնաւոր տեղեկութիւն պիտի տայ այս հայաբնակ երկրին մէջ ալ՝ ազգային կենաց երեւոյթներուն վրայ: Հանդէսի յարգելի խմբագրութեան գնահատումը քաջաբերէ է մեզի համար. շնորհակալութիւն կը յայտնենք մեր Վեր. պաշտօնակիցներուն:

Շնորհակալութիւն նոյնպէս Պ. Մինաս Զերադի որ իւր L'Arménie-ին մէջ ծանուցած է մեր այս հրատարակութիւնը:

ՏԵՂԱՍԱՆ ԼՈՒՐԵՐ

Բարձր. Խոփը որ գիշեր մը Գուպէի պալատն անցունելէ ետք՝ Աղեքսանդրիա վերադարձաւ, այս տեղը անուամբ միջոցին ընդունեց Գահիրէի կառավարիչ Մահէր փաշան և ոստիկանութեան վերատեսուչ Հարվէյ փաշան զորս ճաշի վար դրաւ:

— Էլ-Թօր մարքանոցէն առնուած լուրերը գոհացուցիչ են. թէ՛ տաղաւարներու տակ և թէ՛ նաւերուն մէջ զոհուած ուխտաւորներուն առողջական վիճակը լաւ է: Առողջապահական ժողովոյ նախագահ Տըրթ, Ռիւֆֆէր Էլ-Թօր գնաց՝ անձամբ քննելու համար մարաշնոյին վիճակը:

— Տամիէթէն ներքին գործոց նախարարութեան ուղղուած նորագոյն հեռագրեր կը ծա-

նուցանեն թէ գործադուր ընող բոլոր ձկնորսներն իրենց աշխատութիւնը վերսկսել են:

— Հանրօգուտ յինութեանց նախարարութեան խորհրդական Սըր Ռիֆիէմ Կարսթէն այսօր Եւրոպա կուղևորի արձակուրդով:

— Երէկի Բոսկրէին մէջ կը կարդանք թէ Մուսթաֆա Բամէլ «Եգիպտացի հայրենասէր» այս անգամ Պոլիս երթալուն ո՛չ պալատին մէջ և ո՛չ Բ. Դուռը իր սպասած գրկաբաց ընդունելութիւնը չէ գտած, հակառակ այն ջերմ յանձնարարականներուն որոցմով լեցուած խոշոր պաշտօնակ մը տարած էր իր հետ: Երկար ժամէ ջարտուղար մը զինքը ընդունելով հաճած է վար դնել ամեն լեզուէ չատ մը թերթեր և թուղթեր որոնցմով ներկայանալ կուզէր Սուլթանին որ զինքը իր ներկայութեան չընդունեց:

Անկից Դուռը գնաց արտաքին գործոց նախարարը տեսնելու, բայց թէվիֆ փաշան ալ զինքը չ'ընդունեց, այլ յանձնարարեց Մուսթաֆա Բամէլին՝ Եգիպտական գործերու տեսուչին ներկայանալ:

Եգիպտացի արիւնքը՝ յուսահատ՝ Պ. Բանպոնի այցելութիւն մը սուտաւ: Ֆրանսական դեսպանը, կաւեյնէ Բոսկրէ, շատ անտարբեր գտնուած է իր այցելուն հանդէպ և բաւականացած է նիւտ Օթէյին և Բիրամիոններուն վրայ տեղեկութիւններ հարցունելով:

ԹՈՒՐԷԻԱ ԵՒ ՅՈՒՆԱՍՏԱՆ

Աւասիկ հաշտութեան բանակցութեանց նկատմամբ հասած վերջին հեռագիրներն ուրոնք ճօթաներու փոխանակութենէ ու բարեացակամ խորհուրդներէ անդին չեն անցնիր:

Կ. Պոլիս, 8 յուլիս — Դուռը չըջարեական մը զրկեց Տէրութիւններուն՝ բացատրելով ու պաշտպանելով Թուրքիոյ տեսութիւնները ի մասին Թեսալիոյ, ուսկից ելլելու պահանջման դէմ կը բողոքէ: չըջարեականը մասնաւորաւորապէս կը ծանրանայ հանրային կարծիքին վրայ որ այս գրաւեալ նահանգին պահուելուն կողմն է:

Բոլոր Տէրութիւնք հակառակ են Թուրքիոյ տեսութիւններուն:

Կ. Պոլիս, 9 յուլիս — Աւստրիական գեսպանը չորեքշաբթի օրը ծանուցագիր մը ուղղեց Թէվիֆ փաշային, յայտնելով որ եթէ Դուռը օր մը չի որոշէ՝ սահմանագիծի խնդրոյն վրայ բանակցելու համար, Տէրութեանց կողմէ առաջարկուած եղանակաւ, դեսպանները պիտի խնդրեն իրենց կառավարութեանէն ազգու միջոցներ ձեռք առնել:

Կ. Պոլիս, 9 յուլիս — Սուլթանը խնդրեց Աւստրիոյ կայսրէն՝ բարեհաճ ընդունելութիւն մը ընել օտմ կառավարութեան չըջարեականներն: Ֆրանձ Եօնէֆ կայսրը պատասխաններ է խորհուրդ տալով Սուլթանին ընդունիլ Տէրութեանց կողմէ առաջարկուած հաշտութեան պայմանները:

Կ. Պոլիս, 10 յուլիս — Դեսպանները հաւաքական ծանուցագիր մը սուրին Թէվիֆ փաշային, խնդրելով որ Դուռը վերջ տայ իր ձգձգումներուն:

Այս տուտոտ, Տիար Ս. Գարրինեան, ծանօթ տպարանատէր, բազմ ունեցաւ երեք գուռակի միանգամայն հայր ըլլալով:

Տիկին Գարրինեան բարեղէպ ծննդաբերութենէ մը ետքը երեք սիրուն էակները աշխարհ բերաւ:

Նորածններու երկուքը աղջիկ են և մէկը մանչ:

Մայրը և այդ նորածին երրորդաբնիւնը քուլառով վիճակի մէջ կը գտնուին:

Այս ոչ սովորական պարագան կապալուցանէ թէ ծննդեան և կնունքի սովորականները արգելք մը չեն կրնար ըլլալ բաղադրի հայրուն խիւր տեղեւունքուն:

ԿԻՊՐՈՍԻ ՈՐԲԱՆՈՅԸ

Կիպրոսի ազգ. Որբանոցին Տեսուչ Պ. Վահան Քիւրքճեան մեզ ուղղած էր հետեւեալ նամակն այն միջոցին երբ Հայաստանի որբերուն ի նպաստ հանգանակութիւն կատարելու հրապարակային հրաւեր մը կուղղէինք Եգիպտոսի հայութեան: Այժմ որ Խնամատար Յանձնաժողովը կազմուած ու գործի ձեռնարկած է, օգտակար կը համարինք հրատարակել Պ. Քիւրքճեանի նամակը՝ Յանձնաժողովոյ ուշադրութիւնն հրաւիրելով անոր վրայ:

Առ խմբագրութիւն Փարոս լրագրի:

Ձեր թերթի վերջիններ թուով մեր ընտանեկաններուն վրայ հրատարակած խմբագրական տեսութենէն քաջաբերուած՝ կուգամ Եգիպտացի ազգայնոց ուշադրութիւնը հրաւիրելու Կիպրոսի ազգային կրթարան-Որբանոցին վրայ որ գրեթէ երեք ամիսէ ի վեր բացուած՝ այսօր իր յարկին ներքեւ կը խնամէ կը կրթէ Թուրքիոյ զանազան կողմերէն հասած 22 պատանեակներ, մեծ մասամբ որք ու անտէրունք:

Այս հաստատութիւնը՝ տարիներ առաջ յուսուած և ուսումնասիրուած գաղութարարի մը մարմնացումն է, ու թէեւ տախտիկ սկզբնաւորութեան համեստ չըջանին մէջ կը գտնուի՝ տարակոյտ չկայ թէ կրնայ հեռուէն թափափուիլ և ընդարձակուիլ և համապատասխանել ազգային այն ստիպողական պէտքին՝ որ այսօր թէ՛ մերայնոց և թէ՛ օտարոց բացառիկ հոգածութեան տարակազմած է: Ազգիկ Վեհ. Հայրապետը և Կ. Պոլսոյ Ամեն. Պատրիարքը բարեհաճ են համակրութիւն և պաշտպանութիւն ընծայել գործին, իսկ անոր տեսակաւ նախնիներն տպահովելու համար՝ այլևայլ կեցողոյններու մէջ օժանդակ մասնաժողովներ կազմուած են և կը կողմնին:

Կիպրոսի Ազգ. կրթարան-Որբանոցը, որ անտէրունք որբերէ գաղ կընդունի նաեւ թուական տարեկաններ, — տարեկան 15 անգլ. ոսկի վճարուով — կը խոստանայ լուրջ և հիմնաւոր կրթութիւն, լեզուներու և գիտութեանց ուսում, արհեստական վարժութիւն և առողջական ու բարոյական խնամք:

Այդ, Փարոսի միջոցաւ կոչուած կընեմ Գահիրէի և Աղեքսանդրիոյ ազգայնոց ազնիւ զգացումներուն և կը խնդրեմ իրենց աջակցութիւնն այս նորահաստատ ազգային տունը կանգուն պահելու համար: Քաղցր է յուսով թէ, այն ամեն հայերը որ ազգային առողջ գաղութարարութեան մը փրկաբար ազգեցութեանը վրայ հաւատք ունին և մարդասիրական գործերու աջակցելէ հաճոյք կզգան՝ չպիտի մոռնան Կիպրոսի որք ուսանողներն ալ: Հոյ ժողովուրդն է որ հաւաքապէս կամ անհատապէս պիտի պաշտպանէ զանոնք, և պիտի հայթայթէ անոնց ուսուստի, զգեստի և կրթութեան պէտքերը: Հաստատութեան վարչութիւնը ուղղապէս պատասխանատու Ամեն. Ս. Պատրիարքին՝ համարձակօրէն կը յայտարարէ թէ բարեսէրներու նպաստները ամենայն խղճմտութեամբ պիտի գործածուին իրենց նպատակին և հաշիւները պարբերաբար պիտի հրատարակուին: Ով որ կը հաճի որդեգիր տան պահել կրթարան-Որբանոցին մէջ, կամ նպաստ հասցնել, կրնայ ուղղակի թղթակցիլ վարչութեան հետ, այս հասցեով.

Armenian National Orphanage, Nicosia, Cyprus.

17 Յունիս 1897

Տեսուչ

ՎԱՀԱՆ ՔԻՒՐՔՃԵԱՆ

ՀՈՍԿԷ ՀՈՆԿԷ

ՎԵՃԱՊԵՏՆԵՐՈՒ ԾԱՆՈՒԹԻՒՆ

Ով որ Պապիկայի փառանքը հաջող է, անշուշտ գիտե՛ք թէ սովորութիւն մը կ'ոյ որ աւան հոն գալով հիւանդները դարմանուելն առաջ ետքը, անպատճառ մէջ մը կը կռեն:

Տարիներով շարունակ թերթերը Պապիկայի ծանուցած քանակութիւնը կը ծանուցանէին:

Այժմ այդ քաղաքէն կրնանք թէ Աստուծոյ կայսրուհին 41 քիւզ կը կռնէ եղբ: Մէկ տարուան մէջ Եւրոպայէն կայսրուհին 4 քիւզ վրայ դրած է: Անցեալ ձմեռ Անգլիոյ թագուհին Նիսի մէջ 78 քիւզ կը կռնէր և Սպանիոյ թագուհին 67:

Սպանիոյ նախկին Իզաբել թագուհին Աստուծոյ կայսրուհւոյն կրկինը կը կռնէ, այսինքն 82 քիւզ:

Ահա՛ արքայական գերութիւն մը:

ԱՆՊԱՎ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆ

Պոստի մէջ բարեկամութեան ուխտեր կան՝ որ միայն մահով կրնան վերջանալ:

Եթէ այս ուխտը Էրիկ մարդ մը և կին մը կրնան՝ ամուսնութիւնը անկարելի կը դառնայ այս երկուքին մէջ: Ինչ գեղեցիկ բան: Երեւակայեցէ՛ք զգացումներու ինչ վեհութիւն կայ այս ուխտին մէջ, կին մը սիրել առանց ու և է մարմնական դիտաւորութեան, առանց ու և է փափագի, ինչպէս կը սիրենք վերջապէս քոյր մը, առանց մեր քոյրը ըլլալու: Ուրիշ սեռէ մէկը սիրել, պարզապէս բարեկամութեան համար: Կապ մը հաստատել հոգիէն առ հոգի, սիրտէ սիրտ, առանց ականջ դնելու զգացումներու և կրքի մարմնին, խոստովանեցէ՛ք թէ ամեն մարդու գործն է:

Այս ուխտը հետեւեալ կերպով կը կատարեն: Էրիկ մարդը կնկան և փոխադարձաբար՝ իրարու թեւը կը ծակեն և այդ վերքէն յառաջ եկած աւրիւնէն կը ծծեն քանի մը կաթիլ:

ԱՆԳԼԻՅՈՅ ԹԱԳՈՒԻՆ ԵՒ ԻՆԸՅԻՒՆ

Յորէլեանէն աւելցած դիտողութիւն մը:

9 թիւը շատ մեծ դեր խաղացած է Վիքտորիա թագուհւոյն կեանքին մէջ:

Իր հայրը՝ Քէնզլի դուքսը, 9 եղբայր ունէր:

1868ի յեղափոխութենէն ի վեր Վիքտորիա՝ Բրիտանիոյ Գրք վեհապետն է:

Տասնըններորդ դարուն մէջ, 1819ին ծնած է. թուանշաններ՝ որ եթէ իրարու վրայ գումարտին 19 թիւը կուտան:

Գահուն վրայ 1837ին բարձրացաւ. այս թիւը ևն ալ եթէ գումարենք 19 թիւը կուենանք:

Գահակալութեան ատեն 19 տարու էր:

Ամուսնը, Ալբերթ Լեօնար 1840ին ծնած է:

Վիքտորիա թագուհին ինը զաւակ ունեցած է:

Վերջապէս իր անդրանիկը, նոյեմբերի 9ին ծնած և ամուսնացած է Տանիմարայի Գրիգորիան Գրք թագաւորին աղջկան հետ որ կարգուած պաշտօն 19 տարու էր:

ՏՕՔԹՕՐ ԼՕՆԿ

ՏՐ. ԼՕՆԿ, մասնագէտ կանանց, սաւմոսի, մոր քի և զղային հիւանդութեանց: Կ'ընդունի իրեն դիմող հիւանդները Մեզոն Զահար, Շեքիքս Զօքիի ճիւղ դէմը. ամեն օր առաւօտեան ժամը 10էն 12 եւ կէս օրէն վերջ 3էն 5: Բոլոր վկայեալ աղբաւք ձրի կը դարմանուին:

ԲԻԻԶԱՆԴ ՓԱՓԱԶԱՆ ԵՒ ԸՆԿ.

Պատիւ ունին ծանուցանել արգոյ հասարակութեան թէ Պազար Մուրուրի մէջ խանութ մը բացած են ուր ընտիր տեսակէ և ծեծուած խահիւ պիտի ծախուի սովորական գներով:

Այս խանութին մէջ կան նաեւ զովացուցիչ ըմպելիներ:

Le Gérant: HENRY SAKAKINI
Տպագրութիւն ՓԱՐՈՍ Բագրի

Յ. ԵՒ Կ. ՄԱԹՈՍԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

ԳԱՀԻՐԷ ԵՒ ԱՂԵՔՍԱՆԳՐԻՑ

ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ ԾԽԱՆՈՏԻ ԵՒ ՍԻԿԱՌԵԹԻ

ՍԵՏԱԳՈՅՆ ԳՈՐԾԱՐԱՆ

ԸՅԳԻՏԱԳՈՐ ՄԵՐԱՆՈՅ «ՇԱՐԱ ԱԳԱՍԻ»

ԽԱՆԸ ԴԱՏԱՐԱՆՆԵՐՈՒ ԴԵՄ:

ԸՆԹԱՅԻՆ ԳԻՆ ՍԻԿԱՌԵՐՆԵՐՈՒ

Սիկարէթ Ռուսեալ 1000 հատը 2 1/2 Անգ. ոսկի

Խալիլեալ	2	Անգ. ոսկի
Պալատական	1 1/2	Անգ. ոսկի
Պօհճա	1 1/4	Անգ. ոսկի
Նաթիլեալ	1	Անգ. ոսկի
Փօռ	20	Ֆրանք

ՀՐԱՆՏ ԱԶԱՏԵԱՆ

ԱՐԴԿՈՂ ԵՒ ԼՈՒԱՅԱՐԱՐ

Էօղպէրիէ, Պիւլպիւլեանի օթէրի քովընտրի կամարակալ ըողորը բացած խանութին մէջ ամենէն զժուարահաճները գոհացնելու:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿԱՆՈՅՑ ԵՐԹԵԻՆՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 Փետրուար 1897

ԳԱՀԻՐԷՆ ԱՂԵՔՍԱՆԳՐԻՑ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք	Խառն 1,2,3 կգ.	Սմնիւ. 1,2,3 կգ.	Կէս ուղ. 1,2,3 կգ.	Սմնիւ. 1,2,3 կգ.	Էքսորէս 1, 2 կգ.	Սմնիւ. 1,2,3 կգ.	Էքսորէս 1, 2 կգ.	Սմնիւ. 1 2 3 կարգ
Գահիրէ	մեկ. 4 45	—	7 —	8 15	9 30	երեկ. 3 30	երեկ. 4 45	երեկ. 7 15 սոս. 11 —
Պէնհա	» 8 —	—	7 49	9 32	10 15	4 47	5 29	8 32 12 35
Թանթա	» 11 28	—	8 30	10 30	10 55	5 45	6 7	9 30 1 44
Տամանհուր	» 11 48	6 —	8 34	11 15	11 —	6 26	6 11	— 1 54
Ս. Ղ. Ե. Բ. Ե. Բ. Ե. Բ.	» 3 10	7 34	9 41	12 49	11 58	7 59	7 7	— 3 51
Ա. Ղ. Ե. Բ. Ե. Բ. Ե. Բ.	» 6 25	9 15	10 45	2 30	1 —	9 40	8 7	— 5 50

ԱՂԵՔՍԱՆԳՐԻՑԷ ԳԱՀԻՐԷՆ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք	Սմնիւ. 1,2,3 կգ.	Կէս ուղ. 1,2,3 կգ.	Սմնիւ. 1,2,3 կգ.	Էքսորէս 1 2 կգ.	Խառն 1,2,3 կգ.	Սմնիւ. 1,2,3 կգ.	Էքսորէս 1 2 կգ.	Սմնիւ. 1 2 3 կարգ
Ա. Ղ. Ե. Բ. Ե. Բ. Ե. Բ.	—	7 —	7 15	9 —	9 20	2 30	4 15	6 15 11 —
Տամանհուր	» —	8 6	8 58	10 2	12 14	4 13	5 15	8 6 1 9
Թանթա	» —	9 12	10 28	11 —	2 39	5 43	6 10	9 40 2 56
Պէնհա	» 6 15	9 16	11 20	11 5	2 49	6 30	6 14	— 3 6
Գահիրէ	» 7 18	9 59	12 23	11 46	4 43	7 33	6 52	— 4 25
Գահիրէ	» 8 30	10 45	1 35	12 30	6 25	8 45	7 35	— 5 50

ԳԱՀԻՐԷ-ՍԻԻԷՋ

ՊԵՆՀԱՅԻ ԶԱՄԲԱՅ

ՍԻԻԷՋ-ԳԱՀԻՐԷ

ԿԱՅԱՐԱՆՔ	ԱՌԱՍՑ	ԵՐԵԿՈՅ	ԿԱՅԱՐԱՆՔ	ԱՌԱՍՑ	ԵՐԵԿՈՅ
Գահիրէ	մեկ. 11 40	7 —	Սիւէզ (քարափ)	մեկ. 9 50	—
Պէնհա	» 12 28	7 48	» կայսրան	» —	3 30
Զակադիկ	» 12 33	7 53	Իսմաիլիա	» 1 20	7 5
Իսմաիլիա	» 1 34	8 54	Զակադիկ	» 3 7	8 53
Սիւէզ կայսրան	» 1 44	9 4	» 3 17	» 9 3	»
Տօք (քարափ)	» 3 40	1 —	Պէնհա	» 4 13	9 47
	» —	5 —	» 4 17	» 9 4	»
	» 6 55	—	Գահիրէ	» 5 5	10 35